Մայր Աթոռոյս Տպարանական Ժողովը ստացել է Վարդաշէնի Գրիգոր քահանայ Մողոմոնեանցի ձեռքով հինգ ռուբլի, որ նուիրել է Ս. Էջմիածնին Արէշ գաւառակի Հաջի Աղա—Սէիդ—Բէկ Մամէդ օղլին։

Նամակ խմբագրութեան.

Յարգելի խմբագրութեան «Արարատ» ամսագրի

Ս. Պետերբուրգում բնակւող Կապիտան Մ. Խ. Խուբեանց 3-4 տարիներից հետ է փոխադրում է յանուն Կառավարութեանս, յօգուտ Մ. Աթոռի, իր սրտաբուղխ նուէրը։ Իսկ սոյն 1909 թ. փոխադրել է երկու նուագում յիսուն ռուբլի նոյն նպատակով։

Վանական Կառավարութիւնը իր ժամանակին ուղարկելով պատշաճ անդորրագիր, որանով յայտնում է իր շնորհակալիքը յարգելի Կապիտանին, առ Մայր Աթոռն ունեցած իր այդ նուիրական ուխտի համար։

Կառավարութիւնս խնդրում է յարգելի խմբագրութեանդ հրատարակել այս մասին «Արարատի» մերձակայ համարում։—

Նախագահ Վանական Կառավարութեան Ղեւոնդ Եպիսկոպոս

Խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ հրատարակել «Արարատի» մերձակայ համարներից մինում հետեւեալը.

Իմ խնդրանաց համաձայն Մոսկվայի հայ գաղութի հովիւ Արժանապատիւ Տ. Էմմանուէլ քահանայ Նազարեան ուղարկել է ի գործադրութիւն Մայր Տաճարի ընտիր մեղրամոմ երեք փութ, որոց արժէքը հոգացել են նոյն գաղութի անդամներ Պ. Պ. Մովսէս Գալստեան Բուդաղեան 100 ռուբլիով, Ղազար Գալստեան Յակովբեան և Եղիա Կարապետեան Օգաբաշեան 25-ական ռուբլիով, ընդամենն 150 ռուբ.

Մոմերի ստացման մասին յայտնելով ի գիտութիւն Արժ. Էմմանուէլ քահանայի և յարգելի նուիրատուների, յայտնում եմ իմ ջերմ շնորհակալիքս և լաւագոյն բարեմաղթութիւններս վերոյգրեալ անձանց, որոնք իրենց նիւթական միջոցներով օժանդակ եղան Մայր Աթոռի պայծառութեան

Մայր տաճարի Լուսարարապետ՝ Ղեւոնդ Եպիսկոպոս.

—⁂—